ծայնոց թէ վախճան ամենայն իշխանութեանց է բարին և երջանկութիւն հասարակաց առանց որոյ ոչինչ իշխանութիւն է օրինաւոր և հաճոյ Աստուծոյ, ըստ որոյ և պատգամք Աստուածային առ որս իշխանքն են և առաջնորդք ժողովրդեանն Աստուծոյ ահագնալուրս որոտան. «Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ ասէ Աստուած» և թէ «ո՛, ո՛ հովիւք Իսրայէլի մի՞թէ հովիւք զանձինս արածեն, ո՛. ո՛չ հովիւք զխաշինս արածեն և այլն. և առաքելականէն թէ «Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտի յորում ետ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն զոր ապրեցոյց արեամբն իւրով. Եսայ 40. 1. 34. 2 Գործ. 20. 28։ Առ այս նպատակ մտաց երբ Նորին սրբազնասրբութիւնն երիցագոյն Հայրապետն Եփրեմ առ կարի ի՞մն ծերութեան և ցաւագարութեանն անձին, ոչ եւս կարէր վարել զիշխանութեանն հայրապետական, և կամ յաւետ զգործս և զպաշտօնս վերաբերեալն առ աստիճանն հայրապետական կատարել. հարկէր ընտրել զնոր հայրապետ զի ակնկալեալ բարիք հասարակացն, և մանաւանդ յոգնադիմի գործք աթոռայինք և կարգաւորութիւնք բազմապատիկ իրաց որք մնային մի միայն ընտրութեան և հաստատութեան կամ օծման Նորոգ հայրապետի անարգել յառաջացին։ Եւ սակայն տեսաք և տեսանեմք յայտնապէս, թէ զկնի ընտրութեան Ձերոյ և օծութեան, ոչ միայն ինչ մի յակնկալեալ բարեաց անտի հասարակաց և ի գործոյ և ի կարգաւորութեանցն, ոչ գտաւ յառաջացեալ մինչեւ ցայսօր ժամանակի, այլ և ընդ հակառակն ազգի ազգի նորանոր անկարգութիւնք զհետ այնմ եկին և առաւելանան օր քան զօր ի վնաս և ի նախատինս և յապերջանկութիւն Աթոռոյն և Աթոռանոց. և հասարակութեանն ազգի և Եկեղեցւոյ . . . ։ Սպա ըստ այսմ զայլ կարեւորսն թողեալ մեր առաջի առնել Ձեզ յայլում պահու և այլով թղթով ըստ բերելոյ հարկին. աստէն առ ժամս ի Վեհ աստիճանութենէ Ձերմէ ամենախոնարհաբար խնդրեմք զայսոսիկ և եթ.

Նախ զի Վեհաստիճանութիւն Ձեր հաճեսցի ըստ համաձայնութեան մերոյ և ըղձի հասարակութեանն զրել անյապաղ ուր հարկէ և խնդրել զի բարձրագոյն հրամանաւ Նորին կայսերական